ՍԼԱՎՍՏՐՈՅ ՍՊԸ-ի տնօրեն
Ս.Պողոսյանին
Արմավիրի մարզ գ.Դալարիկ
ՀՎՀՀ 04427069

Ծ Ա Ն Ու Ց Ում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Արագածավանի համայնքապետարանի /ներկայումս Արագածավանի համայնքապետարանի իրավահաջորդ Թալինի համայնքապետարանի/ և <<ՍԼԱՎՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ի միջև 20.07.2022թ-ին կնքված թիվ ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/06 ծածկագրով պայմանագրի շրջանակներում <<ՍԼԱՎՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ն պարտավորվում է կատարել ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի Արագածավան և Արտենի բնակավայրերի միջդաշտային ոռոգման հիմնանորոգման աշխատանքները, սակայն չի կատարել ստանձնած պարտավորությունները, որը պետք է ավարտվեր հիմնական և հավելյալ ժամկետները միասին՝ 18.11.2022թ-ին:

2023թ հունվարի 27-ին Թալինի համայնքապետարանը <<ՍԼԱՎՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ի հետ կնքել է համաձայնագիր, որի համաձայն պայմանագրի գործողության ժամկետը ՀՀ կառավարության 29.12.2022թ-ի 2091-Ա որոշման համաձայն երկարացվել է 01.11.2023թ-ը, սակայն աշխատանքները այդ ժամկետում ևս չեն կատարվել խախտելով պայմանագրի 3.1.2 կետը:

2023թ-ի նոյեմբերի 1-ի դրությամբ չկատարված աշխատանքների արժեքը կազմում է **31900000/երեսունմեկ միլիոն ինն հարյուր հազար/ՀՀ** դրամ, իսկ ուշացրած օրերի քանակը՝ **347**օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով ՀՀ-ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/06 պայմանագրի **3.1.4 (բ)** ենթակետի դրույթները, այն է միակողմանի լուծել պայմանագիր և պահանջել հատուցելու իրեն պատճառած վնասները, Թալինի համայնքապետարանի կողմից կայացվել է որոշում լուծել «ՍԼԱՎՍՏՐՈ» ՍՊԸ-ի հետ կնքված ՀՀ-ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/06 պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««ՍԼԱՎՍՏՐՈ» ՍՊԸ»-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Բացի վերը նշվածից հարկ է նշել, որ ՀՀ-ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/06 պայմանագրի **6.2 և 6.3** (**Համաձայն Կողմերի միջև կքնված N ՀՀ-ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/06 աշխատանքների գնման պայմանագրի 6.2 կետի. «Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0, 05% չափով»: Ըստ Պայմանագրի 6.3 կետի. «Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0. 5% չափով»**) կետերի համաձայն Ձեր նկատմամբ կիրառվելու են պայմանագրային պարտականությունների չկատարման համար նախատեսված տույժն ու տուգանքը, որոնք կազմում են համապատասխանաբար՝ **5534650/Հինգ միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր հիսուն/ՀՀ** դրամ տույժ և **159500/մեկ հարյուր հիսունինն հազար հինգ հարյուր/ՀՀ** դրամ տուգանք, ընդամենը՝ **5694150/հինգ միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար հարյուր հիսուն/ՀՀ** դրամ:

Սույնով, տեղեկացնում ենք նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված պայմանագրի ապահովման, ինչպես նաև որակավորման ապահովման տուժանքների մասին համաձայնագրերի դրույթներով, ՀՀ-ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/06 պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու համար Թալինի համայնքապետարանը մտադիր է պահանջ կներկայացնել «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ՝ **7246757** դրամ (որակավորման ապահովում) և 4831171 դրամ (պայմանագրի ապահովում), ընդամենը 12077928ՀՀ դրամ գումար ստանալու վերաբերյալ:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի

չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Այսպիսով «ՍԼԱՎՍՏՐՈՅ>> ՍՊԸ»-ին տրվում է 10/տաս օրացուցային օր տուժանքով սահմանված որակավորման ապահովման **7246757**/յոթ միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր հիսունյոթ/ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման 4831171 /Չորս միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար հարյուր յոթանասունմեկ/ՀՀ դրամ գումարները Թալինի համայնքապետարանի 900462151096 հաշվին փոխանցելու նպատակով

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն ««ՍԼԱՎՍՏՐՈ» ՍՊԸ»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որոկավորման և պայմանագրի ապահովումները միկողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հարգանքով՝

Թալին համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան